

ԿԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԴԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԸ ՆՈՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայոց լեզուն նոր ուսումնասիրողների համար կարևորվում են լեզվի ուսուցման մեթոդները: Սկսնակը լեզուն սկսում է սովորել այբուբենից: Այն սերտելուց հետո պետք է հարստացվի նրա բառապաշարը, որպեսզի վերջինս կարողանա ազատ ու անկաշկանդ խոսել: Բառապաշարի հարստացմանը նպաստում են թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքը: Նրանցից յուրաքանչյուրը առանձնակի դեր ունի, բայց լեզվին լավ տիրապետելու համար անհրաժեշտ է կազմակերպել գրավոր և բանավոր խոսքի համատեղ ուսուցում: Փորձը ցույց է տալիս, որ բանավոր խոսքի հիմնարար ուսուցումից հետո միայն պետք է անցնել համատեղ, զուգակցված ուսուցման:

Բանավոր խոսքը պետք է լինի հստակ, անաղարտ: Հենց սկզբից պետք է հետևել լեզվի անաղարտությանը. չէ՞ որ բանավոր խոսքի աղավաղումները հետագայում էապես վնասում են նաև գրավոր խոսքին:

Ինչո՞ւ պետք է սկսնակների համար առաջնային համարել բանավոր խոսքը: Եթե սկսնակը չկարողանա վարժ խոսել, ճիշտ արտասանել բառերը, ճիշտ հասկանալ նրանց իմաստը, չի կարողանա նաև ճիշտ գրել: Դասի ընթացքում պետք է անընդհատ հետևել ուսանողին, որ նա խոսի միայն հայերեն, հնարավորինս քիչ օգտագործի բարբառային, ռուսերեն, ինչպես նաև այլ օտարալեզու բառեր:

Բանավոր խոսքի միջոցով սկսնակը հարստացնում է բառապաշարը: Խոսքի զարգացումը մայրենի լեզվի դասավանդման ամենաառանցքային հարցերից մեկն է: Լեզուն և մտածողությունը գտնվում են սերտ փոխկապակցության մեջ, նրանք փոխադարձաբար պայմանավորում են իրար: Մտքի հարստության համար անհրաժեշտ է խոսքի հարստություն: Ուստի պետք է սկսնակի բառապաշարը աստիճանաբար հարստացնել: Խոսքը կառուցվում է բառապաշարով, Ժողովրդական աֆորիզմներով ու դարձվածքներով, քերականական ձևերով: Այն պետք է լինի ձկուն, մաքուր, անաղարտ, զերծ օտարաբանություններից, բարբառայնություններից: Սկսնակը, չիմանալով բառի ճիշտ իմաստը և նրա ոճական զանանգան կիրառությունները, հաճախ բառը օգտագործում է ոչ տեղին: Խոսքի հարստացման աղբյուրներն են բառապաշարը, քերականական ձևերը, ոճական հնարանքները: Ուսուցման հաջորդ փուլերում մեծ դեր կարող են խաղալ դասի ժամանակ կատարվող երկխոսությունները, գրական երկերի վերլուծությունները, ընթերցանությունը, անգիրները, հետաքրքիր պատմությունների վերարտադրությունը:

Շատ կարևոր է հայոց լեզվի ուսուցման դասընթացի այնպիսի կազմակերպումը, որը կուղեկցվի ռուսաց լեզվի քերականական իրողությունների հետ զուգահեռներ տանելով: Ուսուցման որոշակի փուլում բոլոր բացատրությունները անհրաժեշտ է կատարել ռուսերենի և հայերենի զուգորդությամբ: Այդպես սկսնակին ավելի ընկալելի է դառնում յուրացվող նյութը:

Ուսուցման հաջորդ փուլում պետք է աշխատել ակտիվ բառապաշարի հարստացման վրա: Մարդու բառապաշարը որոշվում է նրա օգտագործած բառաքանակով:

Բառապաշարի հարստացման համար պետք է շատ ընթերցել, ծանոթանալ գրակա-

նության լավագույն նմուշներին, ապա նաև վերարտադրել ընթերցածը: Սակայն կրկին չմոռանանք, որ գրեթե բոլոր փուլերում էլ սկսնակի հետ աշխատելիս անհրաժեշտ է թարգմանաբար զուգահեռներ անցկացնել ռուսերենի հետ: Գործուն բառապաշարը հարստացնելու համար պետք է անընդհատ պահանջել, որ սկսնակը օգտագործի նոր սովորած բառերը, դարձվածքները, մակդիրները, համեմատությունները, թևավոր խոսքերը: Այստեղ մեծ դեր կարող են ունենալ նաև բնագրերում հանդիպող նույնանիշների, հականիշների, համանունների, համանիշների անընդհատ բացատրությունները:

Մայրենի լեզուն սովորում են թե՛ քերականության և թե՛ գրականության միջոցով: Մի դեպքում մայրենի լեզուն սովորում են քերականության գիտելիքների ուսուցման, մյուս դեպքում՝ գեղարվեստական խոսքի լավագույն նմուշների ուսումնասիրման ընթացքում:

Գրականության ուսուցման ընթացքում խոսքի զարգացումը տեղի է ունենում նրանց բառապաշարի հարստացման, գրական նյութերի ընթերցման և բանավոր ու գրավոր վերարտադրման, ինչպես նաև կինոդիտումների, նկարների, ներկայացումների բովանդակության վերապատման ու շարադրման միջոցով: Գրականության դասընթացի բոլոր նյութերը պետք է լինեն մատչելի: Գրականության ուսուցումը պետք է կատարել երեք փուլով: Առաջին փուլում կուսուցանվեն գեղարվեստական խոսքի նմուշներ, երկրորդ փուլում կավանդվեն գրականության համառոտ, իսկ երրորդ փուլում՝ ավելի ծավալուն դասընթաց:

Գրականության ուսուցումը պետք է սկսել ընթերցանությունից: Գրական երկի ընթերցանության ժամանակ պետք է բացատրել դժվար բառերի իմաստները, նշել դրանց հոմանիշները, որոնք գրական հայերենում ավելի շատ են գործածվում: Դժվար ընկալվող բառերը պետք է ենթարկել բառակազմական վերլուծության: Վերլուծությունից հետո անհրաժեշտ է համեմատություն կատարել երկու բառերի կազմության միջև, որպեսզի ուսանողի մեջ այն տպավորվի:

Գրական երկերում երբեմն պատահում են բարբառային ու փոխառյալ այնպիսի բառեր, որոնց մի մասը գործածվում է գրական հայերենում:

Ոչ գործածական, բարբառային ու փոխառյալ բառերը պետք է այնպես բացատրվեն, որ հետագայում դրանք ճիշտ օգտագործվեն:

Շատ կարևոր է անհատական ընթերցումը, երբ լսարանում կարդում են, ապա բացատրում բառերը, արտահայտությունները: Ընթերցանության ժամանակ շատ ուշադիր պետք է հետևել հատկապես առոգանությանը, քանի որ ռուսերենի ազդեցությամբ շեշտերը շատ հաճախ սխալ են դրվում: Ընթերցանության ժամանակ կարելի է ուսանողին հանձնարարել որևէ բառ փոխարինել նույն իմաստն արտահայտող մի այլ բառով և պահանջել բացատրել տարբերությունները:

Ընթերցումից հետո սկսվում է հարցադրումը, որով մասնագետը ստուգում է, թե որքանով է յուրացրել ուսանողը իր կարդացածը:

Բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են անգիրները: Անգիրների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողի ցանկությունը, նախապատվությունը պետք է տալ նրա սիրած գրողի ստեղծագործությանը, քանի որ այդ դեպքում վերջինս ավելի հեշտ ու սիրով կսովորի այն: Այստեղ կարևորվում է նաև բանաստեղծության մեկնաբանումը, երբ ուսանողը ինքնուրույն վերարտադրում է իր կարդացածը: Բառապաշարը հարստացնող հետաքրքիր աշխատանք է բնագրում եղած մակդիրները գործածել համապատասխան գոյականների հետ և հակառակը՝ գոյականները գործածել համապա-

տասխան մակդիրների հետ:

Գրականության դասավանդումը պետք է անցկացնել համակարգված: Ուսանողին պետք է ծանոթացնել հայ ժողովրդի ստեղծած հոգևոր գանձերի հետ, տոգորել նրանց հայրենասիրությամբ: Ստեղծագործություններին ծանոթացնելու միջոցով պետք է յուրացնել տալ մայրենի լեզվի հարստություններին և դրա հետ մեկտեղ կատարելագործել նրանց բանավոր և գրավոր խոսքը:

Միայն լսարանում և տանը կատարվող աշխատանքը չի կարող ապահովել գրականության դասընթացի բազմակողմանի և արդյունավետ յուրացումը: Շատ կարևոր է արտալսարանային աշխատանքը, որը մեծապես նպաստում է գրականությունից ձեռք բերած գիտելիքների ամրագրմանը, հարստացմանն ու գործնական կիրառմանը: Արտալսարանային աշխատանքը բազմազան է, ունի իր մի շարք տեսակները, կատարման մեթոդները:

Կարևոր մեթոդ է համարվում արտալսարանային ընթերցանությունը: Մայրենին նոր սովորողի կամ արդեն որոշակի տիրապետողի համար շատ կարևոր է նյութի ճիշտ ընտրությունը: Հանձնարարվող ընթերցանությունը պետք է լինի սկսնակին մատչելի, հետաքրքիր: Սկզբնական շրջանում ավելի նպատակահարմար է բանաստեղծությունների ընթերցանությունը, որի միջոցով հնարավոր կլինի աստիճանաբար ճանաչել հայ գրողներին, նրանց ստեղծագործությունները:

Սկզբում հանձնարարվում է ընթերցանություն, ապա այդ նույն բանաստեղծությունների անգիր արտասանում: Ավելի հետաքրքիր է դառնում, երբ կազմակերպվում է բաց դաս՝ նվիրված հայ բանաստեղծներին, որի ընթացքում մայրենին նոր սովորած ուսանողը առաջին անգամ ցուցադրում է իր ունակությունները:

Սկսնակի համար արտալսարանային դասի լավ ձև է այցելությունը Մատենադարան, անվանի գրողների տուն-թանգարաններ, ինչպես նաև պատմական արժեք ունեցող հուշարձաններ: Տվյալ վայրում կարելի է կազմակերպել դաս՝ նվիրված օրինակ հայոց մեծ Ուսուցչապետին կամ անվանի գրողներին: Բացի դրանից այստեղ ուսանողները կարող են դիտել այնպիսի ցուցանմուշներ, ձեռագրեր, որոնք կոնկրետ պատկերացում են տալիս հայ մշակույթի նշանավոր գործիչների կյանքի ու գործունեության մասին:

Արտալսարանային աշխատանքը մեծապես նպաստում է գրականությունից աշակերտների ձեռք բերած գիտելիքների ամրակայմանը, հարստացմանն ու գործնական կիրառմանը:

Բանավոր խոսքի զարգացման լավագույն միջոց են գրական բանավեճերը: Բանավեճի համար ընտրվում է այնպիսի ստեղծագործություն, որը կկարողանան ընթերցել բոլորը: Սակայն բանավեճ կարելի է կազմակերպել ոչ միայն գրական թեմայի, այլև կինոդիտումների և ներկայացումների շուրջ, ինչու չէ նաև ուսանողին հետաքրքրող ու հուզող շատ հարցերի շուրջ: Այս դեպքում նրանք ավելի անկաշկանդ են արտահայտվում, ավելի ազատ ձևակերպում իրենց մտքերը:

Ամփոփելով՝ կրկին անդրադառնանք բանավոր խոսքի դերին հայերենը նոր սովորողների համար և կարևորենք, որ սկսնակներին հայոց լեզուն պետք է ուսուցանել ծրագրավորված, ուրույն մեթոդներով՝ նախապատվությունը տալով բանավոր խոսքին ու բառապաշարի հարստացմանը: